

արևելքէն ինչուան հարաւային արևմուտք , որ է ըսել Արգեսուէն ինչուան Վարաճա-Ջաղ (որն որ Արեկիա լրաշին մօտիկ է) 31 փարսախ երկայնութիւն ունին : Պ . Հեմիլթըն , առաջին առ լերան վրայ ելլողն է , բայց ինքն ալ Ավելքէք գեղին կողմէն ելաւ : 1848էն օգոստոսի 15էն Պ . Սիհաշէֆ , երևելի ռուս ճանապարհորդը (զոր օրագրիս մէջ ուրիշ անդամ ալ յիշեցինք) Ավելքէն սկսեալ 7 ժամ տաժանելի ճամբորդութենէն վերջը , 3005 մեդր ելլալով կանկ առաւ :

Կախ խոռոշներու մէջ սառը կը սկսի տեսնուիլ որոնք բարձր կոներու վրայ կ'ըլլան , բայց շատ առաջ չերթըցուիր դէպ 'ի հրաբուխին հարաւային եղերքը : Հրաբուխին ներսը լեցուն է ահաւոր ժայռերով . ով որ ան ապառաժուտին վրայ կեցած լերան գլխէն անոր ներսը նայի՝ չկրնար սոսկումը բանել . ձեւ ամենեին ձագառի կը նմանի , և աւելի զարմանալի է իր խորութեամբը քան թէ իր շրջապատովը . հարաւային կողմի հրաբուխին բարձրութիւնը հոնտեղի կոնոնի մը ոտքէն չափելով 3841 մեդր է . ասիկայ բարձրագոյն կէտերէն մէկն է որուն վրայ ելլեն ալ շատ դժուարին է . վասն զի ընդհանրապէս ժայռերը ուղղաձիգ են : Պ . Սիհաշէֆ շատ աշխատեցաւ որ գոնէ ճանկուտելով կարենայ վրան ելլել , բայց չյաջողեցաւ . ժայռերը ամենեին դուրս ելած կտոր մ'ալ չունին որուն վրայ մարդ կարենայ ոտքը հաստատել , և ոչ իսկ չուան անցընելու համար յարմար տեղ մը կայ որ մարդ կարենայ ինքզինքը վեր հանել : Ի՞այց բարձր ժայռերէն մէկուն ոտքին քովէն կը տեսնուի գրեթէ 100 մեդր բարձրութեամբ ընդարձակ դաշտավայր մը . հարաւէն և հարաւային արևմուտքէն , և հիւսիսային արևելքէն զհորիզոնը պատած են Ալահ-Ջաղ և Պուլկա-Ջաղ կոչուած լեռներուն գոտիները . հիւսիսի և հիւսիսային արևելեան կողմը քիչ մը աւելի դուրս ցցուած է , բարակ գոտիով մը բաժնուած հորիզոնական երկիր մը կը տես

նուի որն որ Վարդա-Ումաք կ'ըսուի : Աւսարիա քաղաքը սև պղտի կէտի մը պէս հազիւ կը տեսնուի անկից , լերանց գոտին զհորիզոնը հիւսիսային արևելքէն կը պատէ , որն որ Պոնտոսի և Հայաստանու արգելք մըն է որ Աւ ծովը կը խափանէ , և Ատրաբոնի ըսածն ալ կը փճանայ որ կը հաստատէ թէ Արգեսուի ծայրէն Արթերկրականն ալ և Աւ ծովն ալ կը տեսնուի :

Այս լերանց առաւօտի տեսարանը սքանչելի է . հոն մէկէն կ'երևնայ արշալոյսը , և ժայռերուն վրայ կը զարնէ իր նշոյլը հետզհետէ աճեցընելով : Ան ահուելի ապառաժները զիշերը հաստատուն ձիւնով մը ծածկուած կը մընան , բայց երբոր արեւը գագալթին ձիւները կը հալեցընէ , սաստկութեամբ կը սկսին վազել :

ՀԱԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Աղեքսանդրի Պատմութեան առասպեկի մը լուսարանուրիսնը :

Կախնեաց թարգմանած Աղեգուանդրի պատմութեանը մէջ Հնդկաց վրայ շատ զարմանալի առասպելներ կը պատմուին : Ասոնք որչափ որ ալ անտեղի երենան՝ բայց հաւանական կը թուի որ գոնէ ոմանց հիմը նոյն իսկ տեղացւոց աւանդութիւններուն մէջն ըլլայ : Ըատ հետաքրքրական բան մը կ'ըլլար թէ որ ինչպէս հին ազգաց ոմանցը՝ այսպէս ալ Հնդկաց առասպելացն ու արդի աւանդութեանցը հաւաքող մը ըլլար . գուցէ Աղեքսանդրի պատմութեանց յիշած հրաշալիքներուն արդարացուցու մը նոյն իսկ տեղացւոց պատմութեանցն ու մատենիցը մէջ կարենային գտնել : Ասածնուս հաստատութիւն մը տալու համար՝ այն հրաշալեաց կամ առասպելաց մէկուն լուսարանութիւնը տանք , ժողվելով ինչ որ աշխարհագիրք , աւանդութիւնք ու յիշատակարանք նոյն նիւթին ակնարկութիւններ կ'ընեն :

Այսիկա է Արեգակնա և Լուսնի ծառերը ,

որուն վրայ ՚ զեքսանդրի առ ՚ ըրիստուտէլ գրած թղթին մէջ այսպէս կը կարդանք .

՚ Եւ ոմանք եկեալ՝ ՚ ի քաղաքկներոյն (Հնդկաց) ասէին . ՚ ըրքայ , ունիմք ցուցանել հրաշալի արժան իմն քեզ . քանզի ցուցուք քեզ տունկս որ մարդկօրէն խօսի : ՚ Եւ նոյնժամայն հրամայեցի զնոսա գան հարկանել , իբրև այն թէ խաբել զիս . բայց սակայն հարկաւոր համարեցայ գիտել : ՚ Եւ անտի զնացեալ իմ աւուրս երկոտասան՝ եկաք՝ ՚ ի գեօղ մի , զոր ասէին վերջ գոլ և եզր կողմանն հարաւոյ յարեւելս կոյս . և յետ սորա այլոչ ինչ գոյ , այլ որպէս ասէին՝ անապատ գաղանուտ , յոր տեղիս ոչ ոք՝ ՚ ի մէնջ երթեալ : ՚ Եւ իբր հասաք , տարան մուծին զմեղ՝ ՚ ի դրախտ մի . քանզի գեօղն ոչ քարամբք և ոչ աղիւսովք՝ այլ՝ ՚ ի ծառոց էր ծածկեալ վասն արեգական և լուսնի . իսկ ՚ ի միջոցի գրախտին իբր ըստ նոցա պահպանութիւն՝ նուիրական մեհեան էր արեգական և լուսնոյ : ՚ Եւ երկու ծառք էին յոյժ հանգէտ երկեանք , որք էին հաւասարք սարոյց ծառոց որ առ մեղ լինին . և շուրջ էին ծառքն յառաջ ասացեալքս նմանք այնց ծառոց որ յԱգիպտոս միրաբաղանոսն ասեն , և պտուղն նման . և կոչէին զարուականն արոգաց իորհրդոց և զիգականն իգաց . և անուն էր արուականին արեգակն և իգին լուսին , զորս նոքա ասէին իւրեանց ձայնիւ՝ մութուամաւուսա : ՚ Եւ արկեալ սոցա մորթ ազգի ազգի կենդանեաց , արուն զարուաց և եղն զիգաց : ՚ Եւ նոցա երկաթ ոչ զոյր և ոչ պղինձ և ոչ անագ և ոչ կաւ՝ ՚ ի ստեղծանել ինչ : ՚ Եւ ես հարցի զնոսա , թէ էր իրիք են մորթեանս : ՚ Եւ նոքա ասեն . ՚ Ռիւծուց և ընձուց . բայց ոչ արժան է աստ գերեզման ունել , բայց զարեգական և զլուսնի : ՚ Եւ վերարկուս ունէին զգաղանացն մորթս : ՚ Եւ յաղակս գաղանացն զպատճառն հարցանէի ուսանել . և նոքա ասէին . ՚ Իբրև այգ լիցի յորժամարեգակն ծագէ , ձայն՝ ՚ ի ծառոցդ գայ . իսկ յորժամ՝ ՚ ի միջոցի երկնի լինի , և յորժամ հանդերձեալ է

մտանել , այս երիցս : ՚ Օնոյն և ՚ ի վերայ լուսնին ասէին : ՚ Կարձեալ ասէին , թէ որքան շրջի արեգակն և երեխ լուսով , հրամանս պատասխանւոյ ցուցանեն . և յորժամ լուսինն՝ զլուսնոյ : ՚ Եւ որք թուէին թէ իցեն քուրմք , եկին առ իս և ասեն . ՚ Ռուտ ՚ ի ներքս մաքուր , և երկիր պագ : ՚ Եւ մուծանէին ընդ իս և զբարեկաման իմ զՊարմենիոն , զԼիրատերոն , զԼուղզոն , զԼաքիտայն , զԺարասիլէոնտա , զԺաքայովնա և զընկելին զԺաէոդեքտոն , զԼիոկլէ , արս տասն : ՚ Եւ քուրմն ասէր . ՚ Ժագաւոր , երկաթ ոչ է արժան՝ ՚ ի մեհեանս մուծանել : ՚ Հրամայեցի ապա բարեկամացն զսուրմն՝ ՚ ի բաց զնել արտաքոյ քաղաքորմոյն : ՚ Եւ եկին ընդ իս՝ ՚ ի զօրացն արք երեք հարիւր ապազէնք : ՚ Հրաման ետու որք ընդ իսն էին ամենեցուն շուրջ դիտել և տեսանել մի գուցէ ոք՝ ՚ ի վերայ ծառոցն ելեալ կայ : ՚ Եւ նոցա դիտեալ և քննեալ ասեն՝ թէ ոչ ոք է : ՚ Կոչեցի առ իս՝ ՚ ի հնդկացն որ զհետ իմ եկեալք էին , զի թարգմանութեան հասից՝ ՚ ի նոցանէ . ՚ Երդնում յԱրամազդ յորմալիայն , յԱմովսա , յԱթենաս յաղթակիր աստուածս ամենայն , թէ ոչ սպանանեմ զձեզ : ՚ Եւ միանգամայն ընդ մտանել արեգականն ձայն եկն՝ ՚ ի ծառոցն հնդկերէն խուժադուժ լեզուաւ որ ոչ թարգմանեցաւ մեզ : ՚ Կոչեցի առ իս՝ ՚ ի հնդկացն , և նոքա ոչ կամեցան թարգմանել ինձ որ ինչ՝ ՚ ի ծառոցն ասացաւ . վասն որոյ երկընչէին յինէն և ոչ կամէին յայտնել : ՚ Իսկ իմ մտախոհ եղեալ և բուռն հարեալ ձգեցի տարայ զնոսա՝ ՚ ի զատ տեղի . որ և յականթում ասացին ինձ զայս հնդիկքն . ՚ Դիտացիր արքայ , զի վաղ կորնչելոց ես՝ ՚ ի քոյոցդ : ՚ Եւ որք առ իսն կային , աստուածային նշանացն յայտնի լինելոց , և լուսինն թագուցանել կամեցեալ յարեւելս երեկունն դարձեալ հրաման պատասխանւոյ առնուլ : ՚ Բանզի կշռեալ զհանդերձեալսն մտի՝ ՚ ի ներքս և ասացի աղացելով՝ թէ յողջոյն հասից մօրն իմոյ յլումպիադայ և հարազատ բարեկամացն : ՚ Կարձեալ մինչ բարե-

կամքն անդ կային , միանգամայն ընդ ծագել լուսնին ծառն զնոյն ձայն արձակեաց հելլենական խօսիւք այսպէս թերեւ . Աղեքսանդրէ , 'ի Ռաբելոն պարտէք մեռանել . 'ի քոյոցն սպանանիս և ոչ կարես հասանել յլլոմակիագա մայրն քո : Խակ իմ և բարեկամացն յոյժ հիացումն կրեալ կամէի պսակս գեղեցիկս նուիրել աստուածոցն . և քուրմն ասէր . Ոչ է արժան այժմ լինել . և եթէ բռնադատես , գործեա զինչ կամիս , քանզի թագաւորի օրէնք անգիր էն : Եւ իմ տրտմագին եղեալ և յոյժ դժուարեալ ընդ իրսն , Պարմենիոն և Գիլիալպոս աղացէին 'ի քուն լինել և ընդ առաւօտս պատրաստ ունել : Եւ ես իբրեւ ոչ կամեցայ , յարուցեալ առաւօտուն ընդ արեւագալն հանդերձ տասն բարեկամօքն դարձեալ մտի 'ի մեհեանն . և մեկուսի թողի զնոսա , զի մի ոք 'ի զօրականացն պատճառս կացեն : Եւ եկեալ առ ծառն հանդերձ քրմաւն , և եղեալ զձեռս 'ի վերայ ծառոցն հարցի և ասէմ : Ոչէ կատարեալ իցեն ինձ կենացս ամք , զայս կամիմ 'ի ձէնջ ուսանել՝ եթէ հասից 'ի Վակեդոնիա և ողջոյն տաց մօրն իմոյ և կնոջն Հռոքսիանեայ , և յայնժամ այսպէս դարձայց : Եւ միանգամայն ընդ լինել ծագման արեգականն և արկանել զնշոյլս 'ի ծայրս ծառոցն , ձայն իմն սուր և յայտնի եղեւ որ ասէր . Աղեքսանդրէ , կատարեալ են ամք կենացդ քոց , և ոչ ես հասանելոց խնդրոյդ՝ հասանել առ յլլոմակիագա մայրն քո . այլ 'ի Ռաբելոնի ես կորնչելոց և 'ի Վակեդոնիա չես մտանելոց , :

Օ արմանալին ան է որ Աղեքսանդրի այս ծառերուն ըրած հարցմունքի ու խօսակցութեանը պատմութիւնը՝ տեղացւոց մէջ աւանդութիւն է դարձեր . զոր չէ թէ միայն Աղեքսանդրէն , այլ նաև իր առասպելախառն պատմչէն ալ խել մը դարեր վերջը՝ Յովհաննէս տը Վանտըլիլ անունով ԺԴ դարու ծանապարհողը նոյնը կը յիշէ Հնդկաց Ավկիանոսի կղզեաց մէկուն վրայ գրելով . “ Վեզի պատմեցին , կ'ըսէ , ան եր-

կիրներէն մէկուն համար , թէ անապատի մը մէջ Արեւու և Լուսնոյ ծառեր կան , որոնք Աղեքսանդրի հետ խօսեցան , և երբ մեռնիլը յայտնեցին իրեն : Այս ալ զրուցեցին թէ հոնտեղի բնակիչները որ այն ծառերը կը հոգան , պտղոյն և բալասանին ազդուութեամբը 400 կամ 500 տարի կ'ապրին , և թէ այս բալասանները խիստ առատ են այն երկիրներուն մէջ :

Վիջին դարու ատեն , արեմտեայք Արեւուն և Լուսնոյ ծառերուն վրայ՝ հնոց մէջ պատմուած այս աւանդութեանց վրայ մեծ հաւատք ընծայած կ'երեւան : ԺԴ դարու զրուած վիպասանութեան մը մէջ կը յիշատակուի թէ ան ծառերը նոձիի կը նմանին , և թէ Յօփիկրոսոնթէ ըսուած լերան վրայ կը բուսնին : Յակովը տիւ-Քարլոյ Խտալցի բանաստեղծ մ'ալ , անոնց վրայօք աս ստորագրութիւնս կ'ընէ . ” Արեւուն ծառին տերեւներուն փայլունութիւնը և գոյնը ոսկիի կը նմանի , իսկ լուսնինը արծաթի պէս լուսաւոր է . . . :

Վնյիշատակ ժամանակէ 'ի վեր , կ'ըսէ Լէյարտ , Հնդիկք աստուածոց հարսանիքը երկու խորհրդաւոր արմաւենեաց տակը կը կատարէին , որոնցմէ մէկը արու և միւսը էգ կ'ըլլար , և զանոնք մէկմէկու քով ընդհանրապէս լերան մը ծայր կը տնկէին : Հնդկաստանի մէջ շատ տեղ ինչուան այսօրուան օրս դեռ այն նուիրական բլուրներուն վրայ կը տնկեն այս արմաւենիքը և մեծ յարդ կու տան անոնց : Արդէն յայտնի ալ է որ խորին Աստիոյ ժողովրդեան մէջ արմաւենին՝ ինչպէս նաև նոձին Արեւու և Լուսնի նուիրուած էին :

ԺԲ , ԺԴ և ԺԵ դարերու աշխարհագէտները յիշատակութիւն մը կ'ընեն թէ . ” Արեւու և Լուսնոյ ծառերը , Հնդկաստանի թագաւորութեան մէջ Պարսկաստանի մօտիկ տնկուած են , և թէ հոս Աղեքսանդր հարցուց ան սրբազան ծառերուն և պատասխան ընդունեցաւ . . . :

Պամփիւլոյ մէջ Պերկայի համար կոփած դրամներուն մէկ կողմը այլաբա-

նական դրուագ մը կը տեսնուի Արտեմիսի և Անահտայ, երկու նոճի մէջ առած, որոնցմէ մէկուն վրայ Արև մը կայ աստղի ձեռվ, և մէկալին վրայ լուսին : Դարձեալ նոյն քաղքին մէջի կայսերական դրամներուն վրայ կը տեսնուի աստուածուհւոյն դէմքը առանց նոճի, պարզ արեւու և լուսնոյ մէջ քաշուած և վրան ասանկ դրոշմած, Արքէմիս Պէրէայ :

Դարձեալ Աեպտիմիոս Գոռոզի ատեն, Խառան (Աիծագետք) կոփուած միտալի՝ մը երեսը քիչ մը տարբերութեամբ նոյն գրուածքը կը տեսնենք :

Ասանկներ կը գտնուին նաև արեւմուտք Աիկինի (Աքայիա) կայսերական դրամոց վրայ . նոյնպէս նաև Աեպտիմիոս Գոռոզին, Հուլիա Դամնային, Դետային իրեք պղնձէ դրամներուն վրայ իւրիկիոյ Ապողոնիա քաղքին մէջ :

Դարիզի կայսերական գրատան միտալներու և հնութեանց թանգարանին մէջ պղնձէ պղտի նուիրական գահ մը կայ, որուն վրայ կը տեսնուի Ասորոց աստուածուհին մեծ նոճոյ մը խորհրդաւոր նմանութեամբ, որ երկու ուրիշ պղտիկ նոճի ծառերու մէջ տընկուած է, որոնք Արևն և լուսինն են :

Ասիոյ խորաքանդակներն ալ որ հոռվամյեցի զօրաց ձեռքովը արեւմուտք բերուեցան, վրանին աս դրուագները ունին : Ասոնցմէ մէկը զԱիհր կը ներկայացընէ, ցուլի մը վրայ կեցած, երկու նոճի մէջտեղը և Արևուն ու լուսնի կիսարձաններուն մէջ . ուրիշ խորաքանդակ մ' ալ որ Աէսպատէնի դքսին գրքատունը կը գտնուի, զԱիհր Արութմանի ծայրը (որն որ Պարսից Աղիմ պոսն է) նոճի մը խորհրդաւոր նշանովը կը ներկայացընէ . աս սրբազան լերան աջ կողմը կը տեսնուի Արևուն կառքը, իսկ ձախ դին լուսնինը, և երկուքն ալ մէյմէկ նոճի քով են :

ՄԱՆՐԱՎԵՊ

Փոփոխառմիտ պատկերահան մը :

Ատենօք պատկերահան մը կար, չեմ գիտեր որ քաղքէն, որն որ իր վարպետութեամբը ամէն արհեստակցաց մէջ գերազանց էր. սակայն բնութեամբ այնչափ փոփոխական՝ որ քովը Յոթ համբերողն ալ չէր կրնար դիմանալ :

Դէմք նկարելու մէջ շատ Ճարտար էր այս պատկերահանը, այնպէս որ նկարածը կարծես թէ կամ բնականն է և կամ թէ բնութիւնը երկրորդ անգամ զանիկայ ըրած ըլլար . և եթէ իր վրձինը կարենար խօսիլ ալ տալ՝ ուրիշ բան չէր մնար ըսելու, բայց եթէ այս կտաւն ալ կենդանի է : Այսպիսի հընարագէտ Ճարտարութեամբը կրնար իր բաղդը շինել . բայց եկու նայէ որ փոփոխամտութեր պատճառաւ քիչ մարդիկ յանձն կ'առնուին վերաբերութիւն մը ունենալ հետը . վասն զի, այսօր կ'ուզէր կը նկարէր, վերջը տասնըմէկ օր և ոչ կ'ուզէր անոր վրայօք խօսիլ : Աէլի գէշը ան էր որ ըստ իր բնաւորութեանը կ'ուզէր որ ամէն իրեն եկողներն ալ ուզածին պէս երեսնին յարմարցընեն . այնպէս որ, եթէ այսօր ուրախ ըլլար՝ կէս ծիծաղելով մը զքեզ դիմացը կը նստեցընէր և այնպէս գրեթէ մինչեւ կէսը կը նկարէր . և թէ որ նոյն միջոցին փոփոխէր իր խելքը, և տխրութիւն մը գար վրան, կ'աւրէր բոլոր նկարածը և կ'ուզէր որ դուն ալ տխուր դէմք մ'առնուս՝ և նորէն կը սկսէր պատկերը : Աչ երբէք պատկեր մը կը լմնցընէր առանց շատ անգամ դիմացինին դիքը փոփոխել տալու, ինչպէս որ խելքին կը փչէր : Այնչափ որ՝ չգիտցուիր թէ ինչպէս կրնար գործ մը լմնցընել այս ունեցած ամէն կատարելութեամբքը : Ասոնց վրայ պէտք է աւելցընել՝ թէ ինչնեղութիւն էր իրեն ձեռքն իյնալը . վասն զի օր մը մեծ մարդավարութիւն կ'ընէր, ուրիշ օր մը քիչ կը մնար զքեզ խածնելու կամ վրձինները և ներկերը